

ՀԻՆ ՔՆԱՐ

Մեղեղի Յարոշքեան Տեսուն .

Յարիհահրաշ վեհագունից դասապետն սրովբէից
Իջեալ փայլակնահրաշ ի գերեզմանն կենսատուին ,
Երգէր նոր զաւետիան՝ աղաղակէր ,
Աւետէր առ սուրբ կանայսն . զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս .
Յարեաւ Տէր , յարեաւ . աւետիս ձեզ ո՛վ կանայք :
Անմարմնոցն վեհագոյն պետն սրովբէից դասապետն քրովբէից՝
Սրբափայլ զգեստաւորեալ եւ ի գոյն արփայն պճնեալ ,
Ի պատիւ սուրբ յարութեանն պար առեալ ըզտապանաւն
Երգէր նոր զաւետիան՝ աղաղակէր ,
Յարեաւ Տէր , յարեաւ . աւետիս ձեզ խընկաբերք :
Կենարարին սուրբ յարութեամբն տիեզերք նորոգեցան .
Մահ մահու յաղթեաց , եւ Աղամ՝ կենդանացաւ .
Հրեշտակն յերկնից իջեալ փողէր զպանծալի սուրբ յարութիւնն .
Երգէր նոր զաւետիան , աղաղակէր ,
Յարեաւ Տէր , յարեաւ . աւետիս քեզ Տիրամայր :
Որք ի Քրիստոս արձանացան՝ յողջոյն կենաց հանդիպեցան .
Կանայքն պատուականք իւղարերք եւ խընկաղգեացք
Խընդութեամբ ընթանային ի պատմել աշակերտացն
Ըզյարութիւն խաչեցելոյն .
Յարեաւ Տէր , յարեաւ . աւետիս ձեզ Առաքեալք :
Բանն Աստուած *
Նոր Սիոնի նոր որդիք կենդանածնեալք ,
Հրաշք և փառաւորք տրոհեալք տէրունւոյն ընդ տիեզերս .
Երգէր նոր զաւետիան , աղաղակէր ,
Յարեաւ Տէր , յարեաւ . աւետիս ձեզ Տիեզերք :

* Տողս պակաս կ'երևի , թէ և օրինակին մէջ պակասութեան նշան չկայ , որ գրուած է յամին 1348 : Մեղեղիիս տնագլուխ տառերէն կ'իմացուի որ հեղինակն էր ՅԱԿՈԲ , թերեւ Սանահնեցին 'ի ծԱ

գարու , որոյ թուի Յանսիւքնախն ծոցոյ հօր շարաւ կանն հանգստեան , որ նոյնպէս Յակոբ կապէ տնա գլուխ գրերոջն :